

զծեզ¹ էաք, այլ սննդակիցք էաք ձեզ եւ խաղակիցք, կրելով ի խաղու զարկանելիս ձեր զկնի ձեր. սնուցանե մայրն ձեր արհնեալ եւ Անուշ-Վռամ² ըստ իւրեանց հոգեսիրութեանս³ եւ զմեզ ընդ ձեզ՝ որպէս եւ զծեզ⁴: 30 Այլ ըստ այնմ ամենայնի քեզ տեառն անկ էի⁵: 31 Իսկ ըստ առաւելեալ շնորհիս, զոր ետ ինձ Զրիստոս,- եթէ արժանաւորի կամ անարժանի՝ զայն տուիչն քաջ գիտաց,- ապա արդարեւ⁶ քեզ իսկ եւ արժանի:

32 Վասն զի ի դարուս յայսմ զքո զբաշութիւնդ⁷ զաւրացուցեալ պայծառացոյց վերին խնամակալութիւնն քան զամենեցունց, որք էին եւ կամ որ այժմ են ի Յայս, եւ զիմ շնորհս՝ քան զբազումս⁸ պարեգաւտաւորաց,- ահա անզգամեցայ եւ ճառեմ. ներեա՛, աղաչեմ, փոքր մի անզգամութեանս իմոյ,- ապա ստոյգ առաւել քեզ իսկ էի արժանի:

33 Եւ եմ ես այն Ղազար, ըստ առ ի քէն տեառնե⁹ եւ այլոց բազմաց ասացի, որում ոչ ոք գոյ փոխանակ: 34 Իսկ այժմ, առ նախանձու աղետի¹⁰, բազումք նկրտեին լինել իմ փոխանակ. բայց եթէ իցեն:

35 Զանգի ի սկզբանէ արարածոց բազում աւճիրս գործեաց նախանձ յաշխարհի¹¹: 36 Անդէն եւ անդ ի սկզբանն զնախաստեղծն ընկճեալ¹² նախանձու բանսարկուին՝ դարձոյց զնա¹³ ի հող. եւ վկայէ Գիր ի Կաթողիկէսն¹⁴, եթէ¹⁵ *Նախանձու բանսարկուին եմուտ մահ յաշխարհ*^{16ա}: 37 17Երկուցն միայնոյ¹⁸ դեռ եւս յԱդամայ ծնելոց յաշխարհ, Կայենի եւ Յաբելի, որպէս ի փոքրիկ եւ ի նեղ՝ յանբաւ բնակութիւն տիեզերաց հայեցուցեալ զԿայեն նախանձարկու դիւին՝ եղբայրասպանութեամբ զաւակաց: 38 Ի ձեռն նախանձու գրգռեալ Եսաւ ի վերայ Յակովբայ՝ մահ խորիւր: 39 Ի ձեռն նա-

1 Վ. անզգագոյն քան զծեզ

2 Վ. Անուշ Վռամ

3 Վ. հոգեսիրութեամբ

4 ՏՏ. որպէս զծեզ

5 Վ. անկ էի

6 Վ. *աա արդարեւ

7 Վ. բաշութիւնդ

8 Վ. շնորհէ քան զբազում

9 ՏՏ. չիք տեառնէ

10 ՏՏ. աղետի

11 Վ. աշխարհի

12 ՁՎԱտ. ընկճեալ զնա. այսպէս ըստ ուղղագրութեան ԲԳտ.

13 Ձ. չիք զնա

14 Ձ. ի կաթողիկէսն. Վ. ի կաթողիկէայց

15 ՏՏ. թէ

16 Վ. աշխարհս

ա Իմաստ. Բ 24

17 Վ. չիք երկուցն միայնոյ... Սաւուր ի կորուսանել (*Թուղթ*, 41)

18 Ձ. միայնոյ